Հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի (այսուհետ՝ համակարգող) թափուր տեղն զբաղեցնելու համար

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի 12-րդ կետի համաձայն՝

« ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
համակարգողի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար ընդունվում են հայտեր:

2. Հաստատության համակարգողի պաշտոնն զբաղեցնելու համար հայտ ներկայացնելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) բարձրագույն կրթությունը:

3. Թափուր տեղը համալրելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ (Ձև 2-ին համապատասխան)

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը (դիպլոմը).

4) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներին համապատասխան՝ աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

5) ինքնակենսագրություն:

4.Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝
(gegharkunik.qartughar@mta.gov.am) բնօրինակները ներկայացնել հարցազրույցի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչությունում (հասցե՝**ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7,**տեղեկատու հեռախոս՝ 060-65-06-25, 098-44-40-98,) 2026 թվականի մարտի 18-ից մինչև ապրիլի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև ժամը 17^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Հարցազրույցի անցկացման օրվա և ժամի մասին հավակնորդները կտեղեկացվեն անձնական էլեկտրոնային փոստով կամ հեռախոսազանգով: